



78. ՄԱՐԴ ԵՎ ՕՉ

Թագավորը երազը տըսավ, կանչից ուր վուզիր, իբի, էսաց.
- Ես երազ մ' եմ տըսի, իմ երգի պատասխան տո՛ւր:

- Քո երազ ի՞նչ ի, օր իս պատասխան տամ:

- Չըմ գըտի, - ըսաց, - դիւ պատասխան չըտաս, մարդըմ տը
բիրիս, պատասխան տա:

Վուզիր շատ կան իրի, շատ մարդ էլ իբի, չի կանցեն պա-
տասխան տեն. վուզիր մնաց շվար:

Մեկ օր գեղին մեկ կընըկ էսաց ուր մարդուն. - Մարդի՛,
թագավոր երազըմ տըսեր, գնա՛, պատասխան տո՛ւր, փարա բի՛,
մի ապրուստ ենինք:

- Կընըկ, չըմ գըտի, ի՞նչ պատասխան տամ:

- Գեղական կերթան, դիւ էլ խիտքիր գինա՛:

Մարդ էլավ, շվար-շվար գինաց:

Մեկ քար ըռաստ էկավ, մարդ նեղացիր եր, նստավ, անտե
քիչ մը ըռահաթավ: Չեն էլավ քարից: Իրիշկից, օժ մը տըսավ:

- Մա՛րդ, դիւ դի՛ւր գնա:

- Վալա՛, թագավոր երազ մը տըսի, երթամ, անուր
պատասխան տամ:

- Դիւ գըտի՞ս՝ անու երազ ինչ ի, օր պատասխան տաս:

- Չէ՛, վալա՛, չըմ գըտի:

- Օր թե չիս գըտի, ինչո՞ւ կերթաս:

- Իմ կընըկ վըր ծի զհւրիր ի, իս անու ախուն կերթամ:

- Որ ընցկունն ի, անու երազ քի նշանց տամ. թագաւոր օր ինչ տա, դու բիրիս խա ըզի կիսիս:

- Խա՛, վաղտա ըլնը, - Եսաց. շատ հերդում հերդվըցավ էլ:

- Դե՛, էլի՛, գինա՛, թագաւորըն Եսա՛ դու մեջ էրզին տըսըր իս՝ էրկնուց գել կը թափեր. պատճառն էլ ի՞նչ ի՛ աշխարք էղած գել, գքի պախի՛, հիշա՛ր կաց, քի չըսպանին, քու թագաւորու-թեն-թախտ ծեռնեն առնըն: Էան էլ ի՛նչ կու տա, բի՛ խա ըզի կըսի:

Մարդ էլավ գինաց, գինաց դիմաց թագաւորըն դադրավ:

Թագաւոր Եսաց. - Դու ի՞նչ իս իկի:

- Իկիր իմ՝ քու էրզին պատասխան տամ:

- Դու գըտի՞ս՝ իմ էրազ ի՛նչ ի:

- Բալքի գըտիմ, - Եսաց: - Դու տըսար մեջ էրզըն՝ էրկնուց գել կը թափեր, աշխարք էղեր գել. հիշա՛ր կաց, գքի մեջ չուտըն:

Թագաւորը շատ փարա էտուր անու, մարդն էլ Եսաց. - Թագաւոր, խա զի մարդ դիր, ճամբխեն ըզի չըթալնին:

Թագաւորը շատ մարդ իդիր խիտ, էկան:

Աղու միտք ի՞նչ ի՛ գեդ մարդիր իբի խատ ուր, զան օծ սպանին:

Էկավ, խասավ ան քարու մոտ, մարդիր պախից, քար մի իդի էս ծուց, փարեն էլ մեկէլ ծուց, Եսաց. - Ինչ իս քարն կը զարկիմ, դու էլ հիլե՛ք, ըզի հուգմե՛ք, զօծ սպանինք:

Էլավ, գինաց, դիմաց օծուն դադրավ, կանչից. - Օ՛ձ, դու արի, փարեն բիրիր իմ, իս, դու կըսինք:

- Դու՞ր ի փարեն:

Փարեն շանք էտու:

Եսաց. - Ադ մեկէլ ծուց ի՞նչ ի:

- Զատ չի, - Եսաց:

- Քար դրեր իս ծուց, ըզի սպանիս. գինա՛, չըմ իգա՛ դու:

Մարդ էլավ, դարձավ, գինաց, մարդիրուն Եսաց. - Էլեցե՛ք, գացե՛ք, էլ իս չըմ վախիմա:

Էկավ ուր տուն, կընըկ Եսաց. - Մա՛րդ, չէ՞ դու չէր իրթիր:

- Կընը՛կ, մեկ օծ ըզի նշանք էտու:

- Դու օծուն բան չըտվի՞ր:

- Չէ՛, - Եսաց:

- Վաղ միգնե դավա չէնը ան օծ:

- Չըմ գըտի. իս մարդ բիրի խա գի, սպանի ան օծ, դիւս չէկավ:

Միւս տարին թագաւոր էլմ էրագ տըսավ, էլմ կանչից վուգիր:

- Թագաւոր, վուվ ինչ պատասխան տվիր ի, էլմ ան բիր:

Էլան, օղորկըցըն հիտիվ ան մարդուն: Մարդ մնաց շվար, բան չըգըտի, խատ օծուն պեպախտութեն իրի, մըկա չըգըտի՝ ինչ պատասխան տա:

Կընըկ ըսաց. - Մարդի՛, գինա՛ մատ ան օծու:

Էլավ շվար-շվար գինաց, գինք էտու ան քարը տակ:

Օծ էլմ կանչից. - Դի՛ւր տ'երթաս:

- Թագաւորը օրողկիր ի մա գի, ուգիր ի, էրագ ի տըսի, էրթամ:

- Էրթա՛ն, գըտի՛ս՝ ի՞նչ ի անուր էրագ:

- Չէ՛, հավատա:

- Օր թե չըս գըտի, ի՞նչ տ'երթաս:

- Էկեր իմ մա քի, սե՛րն Աստըծուն, ըգի կը սպանի:

- Ան դիրն էր, դիւ իկի մա գի, քի շանք տըվը, դիւ փարեն բիրիր, ըգը չի տըվը:

- Աս դիր վաղտա ըլնը, ինչ տա, բիրիմ տամ քի:

Օծ էսաց. - Մա՛րդ, գինա՛, թագաւորին էսա՛ իս գըտիմ քի էրագ, ինչ դիւ տըսար. գըշիր մանչ էրգըն էրկնուց աղվես կը թափեր, պատասխան ի՞նչ ի՞ քիգնե հիշա՛ր կաց. աշխարք էղեր ի լեպ. մեկ գքի չիւտի, քիւ թախտ քիւ ձեռնեն ամըն:

Էլավ, գինաց մա թագաւոր դադրավ:

Թագաւոր էսաց. - Էկա՛ր:

- Իս ա, էկա:

- Իմ էրագ ի՞նչ ի:

- Դիւ տըսիր իս՝ էրկնուց աղվես կը թափեր:

- Իս տըսիր իմ՝ աղվիս ի թափի, անու պատճառը ի՞նչ ի:

- Անու պատճառը էնը ի՞ աշխարք էղեր ի լեպ, քիգնե հիշա՛ր կաց, մեկ էլ քի չի խափի, քիւ թախտ քիգնե ամըն:

Թագաւոր անու շատ փարա էտու, ուր փարեն առից, էկավ, միտք էրավ. «Ինչո՞ւ ան ճամբխով էրթամ, հիւրիշ յանով կ'երթամ»:

ճամբախ փախից, էկավ ուր տուն, կընըկ էսաց. - Մա՛րդ, էլմ
օ՞ճ նշանք էտուր:

- Խա՛, էլմ օճ նշանք էտու:

- Օձուն զատ տըվի՞ր:

- Չէ՛, հաւրիշ ճամբխով էկա:

Մնաց մեկէլ տարըն, թագաձուրը էլմ էրագ տըսավ, էլմ
վուզիր կանչից:

- Վուզի՛ր, - էսաց, - մեկ կուզիմ՝ իմ էրզին պատասխան տա:

Էլան, էլմ օղորկեցին հիտիմ ան մարդուն:

Մարդ մնաց շվար, էրթա՛ չըլնը, չէրթա՛ չըլնը:

Չէլան, զհւրով տարան. հասան ան քարըն, մարդիրուն
էսաց. - Դիւ գացե՛ք, իս էրթամ մատ քարին, իգան:

Մարդ ուրին-ուրին էսաց. «Էրթամ, օճ ըզի կօժի, չէրթամ,
մատ թագաձուրին սուտ դիւս իգան, ըզի սպանի, աղիկ ի՝ օճ ըզի
կօժի, մատ թագաձուրի սուտ դիւս չըգան»:

Էլավ, գինաց մա քարին կըծկվավ շվար-շվար, օճ կանչից
վիրա:

- Դիւ է՞լմ իկի:

- Էլմ իկիր իմ, խա՛, վալա՛, էլմ իկի, ի՞նչ ինիմ:

- Ան գախ նեղը կըյնիս, կը գան, ան գախ, ինչ փարեն
ծուցըդ ի, փախչիս, չըս իգան մա զի:

- Վալա՛, ան առաջվան փարեն ինչ տըվը, բիրիր իմ խիտ:
Մըկա ան ինչ տա, բիրիմ էսա տեղ, ա՛ռ քի, ըզիկ պըրծուցիս անու
ծեռնեն:

- Գինա՛, էսա թագաձուրին՝ դիւ տըսըր իս մանչ էրզին՝ գան
կը թափեր էրկնուց. պատճառը ի՞նչ ի՝ աշխարք էղավ գան, դիւ
լուս կի՛ր, խըմը՛, քե՛յք էրա:

Էլավ, գինաց, դիմաց թագաձուրին դադրավ, թագաձուր
խարցընից. - Դիւ էլմ էկար, իս ի՞նչ էրագ իմ տըսի:

- Դիւ մանչ էրզին տըսիր իս՝ էրկնուց գան կը թափեր. աշ-
խար էղավ գան, կի՛ր, խըմի՛:

Ադ մարդ առըց զուր փարեն, դիւ էկավ մատ օճ, կանչից. -
Օ՞ճ, դի՞ր իս, արե՛, զփարեն կըսինք:

Մարդ իբի, իրիք դրվան էլ կըսից, օճ էսաց. - Մա՛րդ, ա՛ռ,
տա՛ր, իս ի՞նչ կենիմ փարեն:

- Աս քիւ սատաղեն ի՝ ընկած իմ ձեռ. երկու դիր պեպախտութեն երը:

- Չէ՛, քի լոմա չըկա, աշխարք եղեր էր սկուն, մըկա աշխարք եղեր ի գան, իս քիւ շվարութենի արով նշանք տըվը, մեկ էլ աշխարք ճարպըցի:

Մարդ փարեն առից, գինաց ուր տուն: Ան խասավ ուր մուրագին...:

